«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում:

Առարկան՝ Կերպարվեստ

Հետազոտող ուսուցիչ՝ Զաքարյան Մարինե

Ուսումնական հաստատություն՝ Կոտայքի մարզ ք.Աբովյան Վիկտոր Համբարձումյանի անվան թիվ 10 հիմնական դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

3. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

4. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

6. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Ժամանակակից հասարակությունն արմատական փոփոխությունների մի բարդ շրջան է անցնում: Դա անմիջականորեն ազդում է երիտասարդ սերնդի մտածելակերպի, գործելակերպի, հոգեբանության և արժեքային կողմնորոշումների վրա: Նա այդ գործընթացների մասնակիցն է, այդ արժեքների ժառանգորդն ու կրողը: Նրա առջև ծառանում է նոր ժամանակի պահանջներին համապատասխան վերափոխվելու, կարողությունները զարգացնելու և իրացնելու խնդիրը: Ներկայումս կրթությունը վերաճել է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային անհրաժեշտ որակներ: Կրթական միջավայրի և կրթության բովանդակության արդիականացման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների և մեթոդների վերանայում, կրթության նկատմամբ պետական և հասարակական հոգածության արմատական բարելավում: Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը խորհրդային կրթական համակարգի ժառանգորդն էր և կազմավորվել էր նրա հենքի վրա: Խորհրդային Միությունում միասնական էին կրթական խնդիրները, մեթոդական սպասարկումը: Միասնական էր նաև արժեհամակարգը: Մեզ մնում էր միայն տեղայնացնել կենտրոնից եկած որոշումները: Անկախացումից հետո իրավիճակը կտրուկ փոխվեց: Կրթական համակարգի արմատական վերակառուցման պահանջը կախված էր օդում: Փոխվեց ժամանակաշրջանը, փոխվեցին նաև արժեքները, փոխվեցին արժեքային կողմնորոշումները, նախասիրություններն ու պահանջմունքները: Նոր իրավիճակը համարժեք մոտեցումներ էր պահանջում: Նոր խնդիրներ առաջ եկան, որոնք հրատապ լուծման կարիք ունեին: Շուկայական հարաբերությունների պայմաններում բազմաթիվ արժեքներ, որպես մանրադրամ, շուկա նետվեցին: Նորանկախ հանրապետության նոր սերնդի հասարակական կյանքի, արժեքների նկատմամբ ունեցած վերաբերմունքն ու բարոյական սկզբունքները տարբերվում էին նախորդներից: Կյանքը կառուցվեց նոր կանոնների և նոր նորմերի վրա: Նոր սերնդի համար ժամանակակից աշխարհն իր արժեքային համակարգով բավականին բարդ ու անկանխատեսելի էր թվում: Կրթության հիմնախնդիրներով զբաղված մասնագետներին առաջադրված է ճշգրիտ որոշել և բյուրեղացնել այն գլոբալ արժեքները, որոնք անհրաժեշտ էին քսանմեկերորդ դարի քաղաքացուն: Իսկ որո՞նք են այդ արժեքները, և ի՞նչ մեխանիզմներով էին դրանք հասցվելու սովորողին: Այսօրինակ հարցերը քննարկումների նյութ էին դառնում: Արագընթաց փոփոխությունների, նոր արժեքների այդ հորձանուտում երիտասարդ սերունդը դժվարանում էր իր համար արժեքային կողմնորոշումներ ձևավորել:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակն է ներկայացնել և ուսումնասիրել հանրակրթական դպրոցներում արժեքային համակարգի ձևավորումը աշակերտների մոտ: Այդ նպատակների իրականացումը ենթադրում է կոնկրետ խնդիրների լուծում, որոնք էլ ապահովում են աշխատանքի տրամաբանությունն ու

կառուցվածքը: Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- Վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականություն:
- Պարզաբանել արժեքային համակարգի դերը դասաժամերին:
- Լուսաբանել արժեքային համակարգի ձևավորման գործընթացը և յուրացումը:

Հետազոտության օբյեկտը: Հետազոտության օբյեկտ է հանդիսանում դասարանը, որտեղ կատարել եմ դասապրոցես: Հետազոտության մեթոդները: Հետազոտության կիրառված մեթոդներն են՝ դիտարկում, թեստավորում, վերլուծություն և այլն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Սերունդների կրթության և դաստիարակության արդյունավետության խնդիրը միշտ եղել է մանկավարժների, փիլիսոփաների, հետազոտողների և հոգեբանների ուշադրության կենտրոնում: Ամերիկացի փիլիսոփա և մանկավարժ Ջոն Դյուին, ով իր աշխատություններով նպաստում էր կրթության առաջադեմ շարժմանը, համոզված էր, որ լավագույն կրթությանը հասնում են կրթության միջոցով. «Ես հավատում եմ ,որ կրթությունը ապրելակերպ է և ոչ թե ապագա, ապրելու նախապատրաստություն»: Դեռևս Սոկրատեսն էր իր սաներին սովորեցնում տրամաբանորեն և վերլուծելով մտածել, սակայն առաջին անգամ տեսականորեն այն մշակել է Ջ.Դյուին: Իսկ ըստ ռուս հայտնի հոգեբան Ս.Յ. Ռուբինշտեյնի, մարդու մտածողությունը կարելի է զարգացնել միայն ճանաչողական պրոբլեմների լուծման միջոցով: Լ.Ս. Վիգոտսկին էլ ձևակերպել է մի օրենք , որտեղ ասվում է, որ ուսուցմանը հետևում է զարգացումը, իսկ անձը զարգանում է գործունեության մեջ: Ակտիվ գործունեության ընթացքում են զարգանում խնդիրները միասին լուծելու կարողությունները, և ամենակարևորը՝ ինքնուրույն իմացական գործունեությունը, շահագրգռվածություն ցանկացած խնդիր վերլուծելու և հանգուցալուծելու համար: Այնուամենայնիվ, որքան էլ հոգեբանները, փիլիսոփաները առաջարկեն մեթոդներ կամ ռազմավարություններ , ուսումնառության արդյունավետության խնդիրը մնում է չլուծված կամ ոչ ամբողջապես լուծված, քանի որ ուսուցչի համար խնդիր է մնում, թե ինչպե՞ս կիրառվի կամ օգտագործվի այդ գործիքը, արդյո՞ք դասի մոդելը կօգնի հասնել դրան: Ըստ այդմ էլ , յուրաքանչյուր ուսուցիչ գտնում է իր առարկային համապատասխանող ռազմավարություն և տալիս առաջ եկած խնդրի լուծում:

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին. Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու «արժեհամակարգ» հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստույգությունից: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործ անհատականություն: Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով,

որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «…Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից»:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է»:

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական:

Բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն:

Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի: Սովորողների անձի արժեքների ձևավորման առումով հանրակրթության մեջ իր մեծ դերնն ու նշանակությունն ունի կերպարվեստ առարկան՝ արվեստաճանաչողությունը: Որն իր մեջ ներառում է կապը ճշգրիտ գիտությունների, հումանիտար և բնագիտական առարկաների նաև օտար լեզուների հետ: Երեխան ծանոթանալով արվեստի բոլոր ժանրերի հետ կսկսի իր շրջապատող աշխարհը այլ կերպ դիտարկել և կարևորել: Արվեստը հասարակական գիտակցության ձևերից մեկն է, որի հիմքում ընկած է միջավայրի, շրջապատող իրականության վերապատկերումը: Արվեստն իր տարբեր տեսակներով ծագել է շատ ավելի վաղ,քան արվեստ հասկացությունը: Արվեստի՝ որպես մտածողության առանձնահատուկ ձևի առաջացումը հնարավոր եղավ միայն պատմական այն ժամանակաշրջանում,երբ տեղի ունեցավ աշխատանքի հասարակական բաժանումը և արվետը դարձավ որոշ խավի մենաշնորհը: Աշխատանքը երկար ստեղծագործական գործընթաց է, որի ընթացքում վերափոխվում է մարդը, նրա ուղեղն ու զգացմունքները: Որպեսզի ծնվեր արվեստը, մարդը պետք է տեսներ ու զգար: Շփվելով բնության հետ, մարդը ճանաչում է այն, հիանում նրա գեղեցկությամբ ու բազմազանությամբ, բնականաբար նրա մեջ առաջանում է տեսածը զգացածը վերապատկերելու պահանջ: Այդպես նախնադարում ստեղծվեցին Ալտեմիրյան որմնանկարները, պալեոլիթյան Վեներաները և այլ ստեղծագործություններ: Ըստ հնագետների արդեն պալեոլիթյան շրջնում գոյություն ունեին կերպարվեստի գրեթե բոլոր տեսակները՝ գրաֆիկան, գեղանկարչությունը, քանդակագործությունն ու դեկորատիվ-կիրառական արվեստը: Գեղանկարչությունը արվեստագետի ստեղծագործական երևակայությամբ կերպարանափոխված իրական աշխարհի պատկերն է հարթության վրա: Գեղանկարչությունը վառ կերպով արտահայտում է միջավայրի իրական հարաբերակցությունները գույների մեջ ու գույների միջոցով, այն արտահայտում է առարկաների էությունը, դրանց գեղագիտական արժեքը, ճշտում դրանց հասարակական նշանակությունը, համապատասխանությունը կամ հակադրությունը շրջապատին: Գեղանկարչությունը լինում է հաստոցային և մոնումենտալ:

Հաստոցային գեղանակարչությունը անկախ միավոր է և կապված չէ արվեստի որևէ այլ տեսակի հետ: Անվանում առաջացել է հաստոց բառից, որն այս պարագայում մոլբերտն է: Երբ նկարը դրվում է շրջանակի մեջ, արդեն ընդգծվում է նկարի անկախությունը շրջապատի նկատմամբ: Հաստոցային գեղանկարչությունը ունի ենթատեսակներ՝ ժանրեր. Բնանկար, դիմանկար, նատյուրմորտ և թեմատիկ, սյուժետային, ստեղծագործություններ: Ի տրբերություն հաստոցայինի, մոնումենտալ գեղանկարչությունը կապված է ճարտարապետության հետ և հարստացնում, ճոխացնում և լրացնում է ինտերյերի գեղարվեստական ձևավորումը: Մոնումենտալ գեղանկարչության տեսակներն են որմնանկարը, պաննոն, վիտրաժը, ապակենկար, և խճանկարը: Որմնանկարը արվում է պատերին կամ առաստաղներին՝ չոր կամ թաց:Որմնանկարը նկարվում է մասերով. Մեկ սեանսի ընթացքում նկարվում է ստվարաթղթի վրա, ապա կրկնօրինակվում: Պետք է հաշվի առնել, որ սվաղը չորանալիս ներկի գույները թուլանում են: Պաննոն դեկորատիվ բնույթի գեղանկարչական աշխատանք է, որը նախատեսված է պատերի կամ առաստաղի զարդարման համար և սերտորեն կապված է ճարտարապետության հետ, այդպիսով մոտենալով որմնանկարչությանը: Բայց, ի տարբերություն որմնանկարչության, 2 համաշխարհային կերպարվեստի պատմություն դասախոս Աթանեսյան Լ. պաննոն կատարվում է կտավի վրա և առնվում է շրջանակի մեջ՝ ինչպես հաստոցայինը: Չափը կախված է այն տեղից, որտեղ կախվելու է: Պաննոները լինում են նաև ժամանակավոր օգտագործման համար. Դրանցով տոն օրերին զարդարում են քաղաքների հրապարակներն ու փողոցները: Վիտրաժ-ապակենկարը գեղանկարչությունն է ապակու վրա: Նկարվում է ապակու կտորների վրա, ապա հավաքվում անագե շրջանակով: Վիտրաժը հիմնականում ծառայում է պատերի, պատուհանների, դռների դատարկ տարածությունները լցնելու համար: Գեղարվեստական էֆեկտը ստեղծվում է ապակուց ներս թափանցող լույսի ճառագայթներով, որոնց գույներին հաղորդում են պայծառություն և գունային խաղ: Շատ է օգտագործվել գոթական տաճարների մեջ: Խճանկար-մոզաիկայի դեպքում պատկերը ստեղծվում է մանր բնական քարերից կամ գունավոր ապակու կտորներից, կերամիկական կամ այլ ամուր նյութերից, որոնք հատակի վրա: Գունախիճերը ամրացվում են տարբեր թեքությամբ, խոնավ ծեփի վրա: Գրաֆիկան դա գեղանկարչությունն է իր բոլոր դրսևորումներով: Գրաֆիկական կիրառական, գրքային, թերթի,ամսագրի: Ի տարբերություն գեղանկարչության գրաֆիկայի հնարավորությունները ավելի սահմանափակ են, բայց իր նշանակությամբ ու գործողությամբ գերազանցում, են պլաստիկ արվեստի բոլոր տեսակները: Քանդակագործությունը ծավալա-տարածական կերպարվեստն է, որն աշխարհն յուրացնում է պլաստիկ պատկերների միջոցով, որոնք վառ կերպով արտահայտվում են երևույթների կենսակերպը հաղորդելու ընդունակ նյութերում: Քանդակները լինում են բոլորակ և ռելիեֆ: Բոլորակ քանդակի տեսակներն են դիմաքանդակը, կիսանդրին և արձանը: Հարթաքանդակը լինում է բարձրաքանդակ, ցածրաքանդակ: Մարդը քանդակագործության միակ, բայց գլխավոր առարկան չէ. Անիմալիստները ստեղծում են կենդանիների ֆիգուրներ: Կլոր քանդակը կարող է ստեղծել

միայն մարդուն շրջապատող միջավայրի մանրամասները, իսկ հարթաքանդակն ավելի շատ մոտենում է գեղանկարչությանն ու գծանկարչությանը:

Ճարտարապետություն

Ճարտարապետություն *(լատիներեն architectura)*, շենքեր, կառույցներ, ինչպես և դրանց համակարգով մարդու կյանքի ու գործունեության համար գեղեցիկի օրենքներով ու հարմարավետ տարածական միջավայր ստեղծելու արվեստ: Նրա գեղարվեստական կերպարները նշանակալի դեր են խաղում հասարակության հոգևոր կյանքում: Ճարտարապետության մեջ գեղարվեստական կերպարի ստեղծման հիմնական միջոցները տարածության ձևավորումն ու արխիտեկտոնիկան (կառուցման արվեստ) են: Հատկապես կարևոր են կառույցի մասշտաբայնությունը և բաղադրամասերի ու ամբողջի համամասնությունը, ինչպես նաև ճարտարապետական կոմպոզիցիան (հորինվածք)՝ գործառնական և կառուցվածքային պահանջներին համապատասխան ձևերի ամբողջական գեղարվեստաարտահայտչական համակարգը: Ճարտարապետական հնագույն կառույցներ՝ կացարաններ և արհեստական բնակատեղիներ, ստեղծվել են նախնադարում: Մեգալիթյան կառույցները (մեծածավալ քարերով կերտված պաշտամունքային կառույցներ՝ մենհիրներ, դոլմեններ, կրոմլեխներ) քարերի ուղղաձիգ և հորիզոնական համադրություններն են (Ստոունհենջի կրոմլեխը՝ Մեծ Բրիտանիայում): Պետությունների կազմավորմանը զուգընթաց՝ Երևան են եկել քաղաքատիպ բնակավայրերը, կառուցվել են ոռոգման համակարգեր և Աստծու ու աստվածացված տիրակալների հզորությունը խորհրդանշող կառույցներ (Եգիպտոսում՝ Գիզայի բուրգերը, Կառնակի և Լուքսորի տաճարները, Ասորեստանի և Բաբելոնի զիկկուրատները (պաշտամունքային բրգաձև շինություն), Հին Իրանիպալատները և այլն): Հին Հունաստանում ստեղծվել է քաղաք-պետությունների (պոլիս) համակարգ: Տաճարը քաղաքի պաշտամունքային և ճարտարապետական հորինվածքի կենտրոնն էր, որը կառուցվում էր ակրոպոլիսի (միջնաբերդ) բարձունքին: Դասական տաճարի կատարելության տիպ է պերիպտերը (սյուներով եզերված կառույց), օրինակ՝ Աթենքի Պարթենոնը: Հին Հռոմում կարևորվել են հանրապետության (հետագայում՝ կայսրության) հզորությունը խորհրդանշող կառույցները, կիրառվել են կամարային և թաղային կառուցվածքները (կոնստրուկցիա, Պանթեոն տաճարը): Ճարտարապետությունը բարձր մակարդակի է հասել Վերածննդի դարաշրջանում, սկզբնավորվել է XV դարում, Իտալիայի Տոսկանա մարզի քաղաքներում (Ֆլորենցիա, Պիզա, Լիվոռնո, Կառարա) և զարգացել XV–XVI դարերում՝ Արևմտյան ու Կենտրոնական Եվրոպայի բազմաթիվ երկրներում (Ֆրանսիա, Նիդեռլանդներ, Գերմանիա, Անգլիա, Իսպանիա): XIX դարի 2-րդ կեսին Եվրոպայում ու ԱՄՆ-ում կապիտալիստական կարգերի ամրապնդմամբ և արդյունաբերության զարգացմամբ էին պայմանավորված քաղաքների արագ աճը, արտադրության նոր տեսակների, առևտրական, տրանսպորտային և այլ կառույցների երևան գալը: XIX դարի վերջի – XX դարի սկզբի ճարտարապետության մեջ նկատելի են տարբեր

ոճերի համադրումը (էկլեկտիկա) և նոր ուղղությունների՝ մոդեռն, կոնստրուկտիվիզմ, նոր դասականություն (նեոկլասիկա) և այլն առաջացումը: Նոր ժամանակների ճարտարապետության մեջ գեղարվեստական-հորինվածքային խնդիրները դարձել են առավել կարևոր և վճռորոշ, իսկ շինարարական տեխնիկայի զարգացումն ու կատարելագործումը (շարժական ծածկեր, երկակի կորության թաղեր և այլն) նոր հնարավորություններ են բացել համարձակ մտահղացումներ իրագործելու համար: Ժամանակակից ճարտարապետությունը բնութագրվում է զարգացման ուղղությունների բազմազանությամբ, առանձին շենքերի փոխարեն իշխում են քաղաքաշինական կազմավորումները, դառնում են ավելի հարմարավետ և հուսալի, շեշտվում են կառույցների ու համալիրների արտաքին տեսքը՝ վերասլաց են, աստիճանաձև, հաճախ ոչ ուղղաձիգ ծավալներով ու ձևերով, քաղաքաշինական համալիր խնդիրների ամբողջական և ավարտուն լուծումներով: Նոր ժամանակներում ճանաչված ճարտարապետներ Լը Կորբյուզեն, Ֆրանկ Լլոյդ Ռայթը, Միս Վան դեր Ռոեն, Վալտեր Գրոպիուսը, Օսկար Նիմեյերը, Քենձո Թանգեն, Ալվար Ալայտոն, Էրո Սաարինենը, Լուիս Կանը, Ժորժ Կանդիլիսը և ուրիշներ ստեղծել են ճարտարապետական արժեքներ, որոնք մեծապես նպաստել են մշակութային առաջընթացին: Հայկական ճարտարապետությանը բնորոշ են զարգացման բարձր մակարդակը, գեղարվեստական հարուստ ավանդույթները և հատկապես ազգային ինքնատիպությունը, որը, բացի բնական պայմաններից, կացութաձևից և ժողովրդական ակունքներից, պայմանավորված է նաև տեղական շինանյութերի, հատկապես տուֆի բազմազանությամբ ու գեղարվեստաֆիզիկական հատկանիշներով:

Ճարտարապետությունը Հայաստանում

Հայկական ճարտարապետության հնագույն փուլն ընդգրկում է մ. թ. ա. IV–I հազարամյակները, պահպանվել են քարեդարյան անձավներ, պղնձեդարյան և բրոնզեդարյան բնակատեղիներ, դամբարանադաշտեր, մեգալիթյան կառույցներ, բերդշեներ, ժայռափորագրություններ: Հին փուլն ընդգրկում է կազմավորված հայկական պետականության ժամանակաշրջանի՝ մ. թ. ա. VI–III դարերի՝ ստրկատիրական կացութաձևի ճարտարապետությունը: Այդ ժամանակաշրջանը կարևորվում է հատկապես հայկական մշակույթի և Հայկական լեռնաշխարհում բնակվող այլ ցեղերի մշակույթների փոխառնչությամբ: Այս փուլի հիմնական պաշտամունքային կառույցները հեթանոսական մեհյաններն ու տաճարներն էին, որոնց տեղերում հետագայում կառուցվեց քրիստոնեական վաղ շրջանի շինությունների զգալի մասը: Վաղ միջնադարը (IV–VII դարեր) հիմնականում հայկական մոնումենտալ ճարտարապետության ազգային նկարագրի ձևավորման (IV–V դարեր) և հասունության ու կատարելության (VI–VII դարեր) շրջաններն են: Զարգացած միջնադարյան փուլը, ըստ ընդունված պարբերացման, ընդգրկում է IX դարի վերջից մինչև XIV դարը՝ IX–XI և XII–XIV դարերի ենթափուլերով: IX–XI դարերում զարգացման բարձր մակարդակի է հասել քաղաքաշինությունը (Անի, Դվին, Կարս, Վան և այլն), ստեղծվել են

վանական համալիրներ (Տաթև, Սևան, Գնդեվանք, Հոռոմոս, Խծկոնք, Հաղպատ, Սանահին և այլն): XII–XIV դարերում ընդլայնվել են եղած համալիրները, ստեղծվել նորերը, կատարելագործվել է քաղաքաշինական արվեստը, հարստացել են արտահայտչամիջոցները, շինարարական-կառուցվածքային հնարքները, կարևորվել է աշխարհիկ շենքերի (գրատուն, սեղանատուն, հյուրանոց-կարավանատուն), ճարտարագիտական և պաշտպանական կառույցների շինարարությունը, կազմավորվել են ճարտարապետական դպրոցներ Սյունիքում, Վասպուրականում, Գուգարքում, Արցախում և այլուր: Միջնադարյան հայկական ճարտարապետության վերջին փուլն ընդգրկում է XVII–XVIII դարերը, երևան են եկել նոր հատկանիշներ քաղաքաշինության և բնակարանային ճարտարապետության ոլորտներում, մասամբ պակասել են կառույցների մոնումենտալությունը, գեղարվեստական արտահայտչականությունը: Նոր փուլի (XIX դարից մինչև XX դարի առաջին երկու տասնամյակներ) ճարտարապետությանը բնորոշ են մերձեցումը ռուսական մշակույթին և քաղաքաշինության (Երևան, Գյումրի, Գորիս, Նոր Բայազետ և այլն) զարգացումը՝ դասականության ու կանոնավոր հատակագծման սկզբունքների կիրառմամբ: Եթե միջնադարյան ճարտարապետության նախորդ փուլերում բնակավայրի դիմագիծը բնորոշողը պաշտամունքային կառույցների ճարտարապետությունն էր, ապա նոր փուլում առաջնային են դարձել քաղաքաշինությունը և ժողովրդական տան ճարտարապետությունը: Նորագույն փուլը խորհրդահայ ճարտարապետության շրջանն է՝ 1920–1990 թվականներ, երբ գյուղական և քաղաքային բնակավայրերում ծավալվել է զանգվածային բնակարանաշինություն, կառուցվել են ուսումնական, մշակութային, կոմունալ-կենցաղային սպասարկման օբյեկտներ, հաղորդակցուղիներ (կոմունիկացիա) և ենթակառուցվածքներ, բարելավվել են բնակավայրերի սանիտարահիգիենային պայմանները, կարևորվել բնապահպանական խնդիրները: Արդի փուլի (1990-ական թվականների սկզբից)՝ Հայաստանի երկրորդ հանրապետության ճարտարապետությանը բնորոշ են որոշակի որակական փոփոխությունները, տիպային և նորմատիվային պահանջների մեղմացումը, նոր շինանյութերի, կառուցվածքների ու տեխնոլոգիաների կիրառումը, ճարտարապետական ազգային ավանդույթների և համաշխարհային փորձի զուգադրումը: Հայկական ճարտարապետությունը խարսխված է ազգային մշակույթի հարուստ ավանդույթների վրա: Կարևոր են նաև այլ ժողովուրդների հետ մշակութային շփումներն ու փոխազդեցությունները: Հայրենի (Թորոս Թորամանյան և ուրիշներ) և օտար (Դյուբուա, Շառլ Դիհլ, Յոզեֆ Ստրժիգովսկի, Նիկողայոս Մառ և ուրիշներ) հեղինակներից շատերը նշել են հայկական միջնադարյան ճարտարապետության ազդեցությունը Արևմտյան Եվրոպայի ճարտարապետության վրա: Հայկականն էլ իր հերթին ազդեցություն է կրել այլ երկրների ճարտարապետությունից, ինչպես մ. թ. ա. III դարում՝ հայկական հելլենիզմի շրջանում՝ Հին Հունաստանի ճարտարապետությունից, լավագույն օրինակը հունա-հռոմեական պերիպտեր տիպի Գառնիի տաճարն է (I դար): Հայկական ճարտարապետության հուշարձաններից Զվարթնոցը, Գեղարդավանքը, Հաղպատը, Սանահինը, Նորավանքն ընդգրկվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային մշակութային

«Արժեքների ցանկում»: Պետականության բացակայության պայմաններում, նաև ճակատագրի բերումով, հայ ժողովուրդը սփռվել է աշխարհով մեկ, հայոց շինարվեստի ավանդույթները տարածելով նաև գաղթավայրերում:

Գեղանկարչություն

Գեղանկարչությունը ձևավորում է մարդու գեղագիտական ճաշակը, ունի ճանաչողական նշանակություն, ստեղծում է մարդու, բնության, առարկաների, պատմական և այլ երևույթների գեղարվեստական պատկերներ՝ օգտագործելով գույնի, գծանկարի, կոմպոզիցիայի, լույսի և ստվերի ընձեռած հնարավորությունները: Տարբերում են գեղանկարչության պատմական, կենցաղային, անիմալիստական (կենդանիների պատկերումը) և այլ ժանրեր: Նշանակությամբ, կատարման բնույթով ու կերպարներով առանձնանում են մոնումենտալ-դեկորատիվ գեղանկարչությունը (որմնանկարչություն, առաստաղապատկեր, պաննո), բեմանկարչությունը, մանրանկարչությունը, սրբանկարչությունը և այլն: Գեղանկարչական գործեր ստեղծվում են կտավի, փայտի, թղթի, քարի, ապակու, մետաղե կամ այլ հիմքի վրա, որը սովորաբար ծածկվում է հիմնաշերտով: Գեղանկարչության հիմնական արտահայտչամիջոցը գույնն է՝ կոլորիտը, որը յուրաքանչյուր պատկերում ունի իր գունաշարը՝ գամման՝ երբեմն նույն գույնի նրբերանգներով: Գեղանկարչությունն սկզբնավորվել է դեռևս քարի դարում: Պահպանվել են ժայռապատկերներ Ֆրանսիայում (Ֆոն դը Գոմ քարայրեր), Հյուսիսային Իսպանիայում (Ալտամիր) և այլուր: Արևելքի հնագույն երկրներում (հատկապես՝ Հին Եգիպտոսում) և Ամերիկայում գոյություն է ունեցել մոնումենտալ գեղանկարչություն, Հին Հունաստանում՝ ֆրեսկոների (որմնանկարչության տեսակ է՝ թաց սվաղի վրա) և խճանկարների կողքին տեղ է գտել նաև հաստոցային նկարչությունը (հիմնականում մոմանկարչության տեխնիկայով): Հայտնի են անտիկ շրջանի Ֆայյումյան դիմանկարները (հին եգիպտական դիմանկարներ, հայտնաբերվել են Էլ Ֆայյում օազիսում, 1887 թ-ին): Գեղանկարչությունը մեծ վերելք է ապրել Վերածննդի շրջանում: Այդ արվեստի նախակարապետներից էր XIV դարի իտալացի նկարիչ Բոնդոնե դի Ջոտտոն: Վերածննդի խոշորագույն գեղանկարիչներից են Մազաչչոն, Անդրեա Մանտենյան, Սանդրո Բոտտիչելլին, Միքելանջելոն, Լեոնարդո դա Վինչին, Ռաֆայելը, Տիցիանը, Ջորջոնեն (Իտալիա), Յան վան Էյքը, Պիտեր Բրեյգելը (Նիդեռլանդներ), Ալբրեխտ Դյուրերը, Մատիս Նիտհարդը (Գերմանիա) և ուրիշներ: XVII դարում ընդլայնվել և ավելի հստակ ձևավորվել է ժանրերի համակարգը, ծաղկել է մոնումենտալ-դեկորատիվ արվեստը (հատկապես՝ բարոկկո ոճում): XVII–XVIII դարերում եվրոպական գեղանկարչության զարգացման ընթացքը պայմանավորված էր Ֆրանսիայում (Ժորժ Լատուր, Ժան Բատիստ Սիմեոն Շարդեն, Ժակ Լուի Դավիդ), Իտալիայում (Կարավաջո, Ջուզեպպե Կրեսպի), Իսպանիայում (Էլ Գրեկո, Դիեգո Վելասկեզ, Ֆրանսիսկո Գոյա), Ֆլանդրիայում (Պիտեր Պաուել Ռուբենս, Յակոբ Յորդանս), Ռուսաստանում (Դմիտրի Լևիցկի), Հոլանդիայում (Ռեմբրանդ, Ֆրանս Հալս) և այլ երկրներում ազգային դպրոցների ձևավորմամբ: XIX դարում Եվրոպայում և Ամերիկայում

առաջացել են նոր ազգային դպրոցներ, ուժեղացել են տարբեր երկրների գեղանկարչության փոխազդեցությունները: XX դարի խոշոր գեղանկարիչներ Պաբլո Պիկասսոն, Անրի Մատիսը (Ֆրանսիա), Դիեգո Ռիվերան, Դավիդ Սիկեյրոսը (Մեքսիկա), Ռենատո Գուտուզոն (Իտալիա), Վալենտին Սերովը, Մարկ Շագալը (Ռուսաստան) և ուրիշներ իրականությունը նորովի են պատկերել իրենց գեղանկարներում: XX դարի կեսից առաջացել են նոր հոսանքներ ու դպրոցներ, որոնց բնորոշ են իրականության և աշխարհի նյութականության սուր զգացողությունը, կերպարների հոգևոր հարստությունն ու ռոմանտիկ ոգեշնչվածությունը: Գեղանկարչությունը Հայաստանում նույնպես սկզբնավորվել է վաղ անցյալում. հայտնաբերվել են մ. թ. ա. VI–IV հազարամյակների ժայռապատկերներ, նեոլիթյան, էնեոլիթյան շրջանի գունավոր, նախշազարդ և բրոնզի դարի երկրաչափական, բուսական, կենդանական զարդամոտիվներով խեցեղեն: Ուրարտական շրջանում գեղանկարչությունն արդեն մասնագիտացված բնագավառ էր (որմնանկարներ, խճանկարներ): Հայաստանում ավատատիրական կարգերի հաստատումն ու քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոն գեղանկարչությանը հաղորդել են նոր ձև և բովանդակություն. գլխավոր պատվիրատուն դարձել է եկեղեցին, որը որոշակի պահանջներ է դրել նկարիչ-կատարողների առջև: Հելլենիզմի դարաշրջանից մեզ հասած գեղանկարչության դասական օրինակ է Գառնիի ամրոցի բաղնիքի խճանկար հատակը (III դար): Միջնադարյան եկեղեցիների որմնանկարները և առանձին ձեռագրերի մանրանկարներ գեղարվեստական ու պատմամշակութային խոշոր արժեքներ են: XVII–XVIII դարերի մոնումենտալ և հաստոցային գեղանկարչությունը զարգացել է Հովնաթանյան տոհմի նկարիչների, Նոր Ջուղայի դպրոցի (Մինաս, Հովհաննես Մրքուզ) գործունեության շնորհիվ: Նոր ժամանակաշրջանի հայկական գեղանկարչության նշանավոր ներկայացուցիչներ Հակոբ Հովնաթանյանի և Հովհաննես Այվազովսկու մի շարք գործեր գույնի անսովոր դրսևորման շնորհիվ դարձել են այդ շրջանի արվեստի լավագույն նմուշներից:
XX դարի սկզբին Հայաստանում և արտերկրում ստեղծագործող մի խումբ նկարիչներ՝ Վարդգես Սուրենյանցը, Գևորգ Բաշինջաղյանը, Փանոս Թերլեմեզյանը, Ստեփան Աղաջանյանը, Եղիշե Թադևոսյանը, Վարդան Մախոխյանը, Էդգար Շահինը և ուրիշներ, գեղանկարչությունը հարստացրել են բարձրարժեք գործերով: XX դարի 1-ին կեսին հայկական կերպարվեստի ազգային ավանդույթների և գեղանկարչության զարգացմանն իր բացառիկ արվեստով նպաստել է Մարտիրոս Սարյանը: Այդ շրջանում գեղանկարչության առաջընթացին իրենց լուրջ նպաստն են բերել նաև Սեդրակ Առաքելյանը, Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյանը, Սեդրակ Ռաշմաճյանը, Վահրամ Գայֆեճյանը և ուրիշներ:
Հայկական գեղանկարչությունն առանձնակի վերելք է ապրել 1960-ական թվականներին՝ Հարություն Կալենցի, Մինաս Ավետիսյանի, Գրիգոր Խանջյանի, Մարիամ և Երանուհի Ասլամազյանների, Հովսեփ Փուշմանի, Գառզուի, Շարթի, Ժանսեմի և ուրիշների ստեղծագործություններով: Արդի հայ գեղանկարչության ճանաչված դեմքերից են Մկրտիչ Սեդրակյանը, Ռոբերտ և Հենրի Էլիբեկյանները, Կարեն Սմբատյանը, Ռուդոլֆ Խաչատրյանը, Ալեքսանդր Գրիգորյանը, Ջուլում Գրիգորյանը, Արկադի Բաղդասարյանը, Էմիլ Գազազը,

Ռուբեն Ադալյանը, Վալմարը, Փարավոն Միրզոյանը, Սարգիս Համալբաշյանը, Ռուբեն Աբովյանը, Արկադի Պետրոսյանը և ուրիշներ: Հայկական գեղանկարչությունը բազմիցս ներկայացվել է արտերկրում, կազմակերպվել են ցուցահանդեսներ, հայկական արվեստի օրեր և այլ միջոցառումներ:

Գրաֆիկա

Գրաֆիկան կերպարվեստի տեսակ է. ընդգրկում է գծանկարը, ծաղրանկարը, պլակատը և տպագիր գեղարվեստական ստեղծագործությունները՝ փորագրությունը, վիմագրությունը, մենատիպը և այլն, որոնք ունեն պատկերման սեփական արտահայտչամիջոցներ:«Գրաֆիկան» հունարեն է. նշանակում է գրում եմ, գծում եմ, գծանկարում եմ: Գրաֆիկական նկարչությունը, հատկապես գծանկարը, կերպարվեստի ամենահին տեսակն է: Գրաֆիկայի նախատեսակներն են ժայռապատկերները, անտիկ սափորանկարչությունը: Միջնադարյան մանրանկարչության մեջ և Վերածնընդի արվեստում ընդլայնվել են գրաֆիկայի արտահայտչամիջոցները: Գրքի տպագրության գյուտից հետո արագորեն զարգացել է փորագրությունը (Ալբրեխտ Դյուրեր, Ժակ Կալլո, Էժեն Դելակրուա և ուրիշներ), գծանկարը (Անրի Մատիս, Միխայիլ Վռուբել), գրքի գրաֆիկան (Ուիլյամ Մորրիս, Վեռներ Կլեմկե, Վլադիմիր Լեբեդև): Պլակատը՝ որպես գրաֆիկայի տեսակ, ստեղծվել է համեմատաբար ավելի ուշ. ձևավորվել է XIX դարում՝ որպես առևտրական և թատերական գովազդի տեսակ, այնուհետև ծառայել նաև որպես քաղաքական քարոզչության միջոց: Գրաֆիկական նկարն ստեղծվում է թղթի (հազվադեպ՝ մետաքսի կամ մագաղաթի) վրա՝ թղթի գույնի օգնությամբ՝ մատիտով (մատիտանկար), գրչով (գրչանկար), ածխով (ածխանկար), կավճաներկով (կավճանկար) և գրաֆիկական նյութի վրա կատարվող փորագրության բազմազան տեխնիկայով: Գրաֆիկայի արտահայտչամիջոցներն են գիծը, գծաշարը, լուսաստվերը, բիծը, թղթի գույնը: Գրաֆիկական գործերում գույնի դերը սահմանափակ է: Թեման նկարաշարով բացահայտելու, մեծ տպաքանակով վերարտադրելու հնարավորության շնորհիվ գրաֆիկան լայնորեն օգտագործվում է զանգվածային քարոզչության բնագավառում:Գրաֆիկական նկարչության հիմնական ճյուղերից են հաստոցային (հաստոցային գծանկար, էստամպ՝ նկարչի պատրաստած տպագրական օրինակի առանձնատիպը), գրքի և թերթ-ամսագրային (պատկերազարդում, դեկորատիվ ձևավորում, տառատեսակներ), կիրառական կամ գեղարվեստաարդյունաբերական (պլակատ, նամականիշ, ազդագիր և այլն) գրաֆիկան: Գրաֆիկայով ստեղծվում են նկարչության բոլոր ժանրերի գործեր՝ թեմատիկ կոմպոզիցիա, բնանկար, դիմանկար, նատյուրմորտ և այլն: Հայկական գրաֆիկայի զարգացումը խթանել են Հակոբ Մեղապարտը, Աբգար Թոխատեցին (XVI դար), հետագայում նաև մյուս հայ տպագրիչները, որոնց հրատարակած գրքերին բնորոշ են զարդարուն գլխատառեր, գլխազարդեր, պատկերներ: Առավել որակյալ էին XIX դարում տպագրված գրքերի գրաֆիկական էջերը: Ուշագրավ են Հ. Քաթանյանի փորագրությունները, Աղաթոն Հովնաթանյանի վիմագրություններն ու գծանկարները, Էդգար

Շահինի, Տիգրան Փոլատի պատկերազարդումներն ու օֆորտները (փորագրություն՝թթուներով մշակված լաքապատ մետաղի վրա), Վարդգես Սուրենյանցի պատկերազարդումները: Նրանց նկարազարդումներով լույս են տեսել Անատոլ Ֆրանսի, Ժան դը Լաֆոնթենի, Ալեքսանդր Պուշկինի և ուրիշների գրքերը, իսկ Է. Շահինի օֆորտները ոսկե մեդալներ են շահել միջազգային ցուցահանդեսներում: Հայկական գրքի գրաֆիկայի զարգացմանը նպաստել է հատկապես Հակոբ Կոջոյանը: Գրաֆիկական ինքնատիպ գործեր են ստեղծել Տաճատ Խաչվանքյանը, Վանո Խոջաբեկյանը: Սփյուռքում հանրաճանաչ են գրաֆիկական ստեղծագործությունների վարպետներ Գառզուն, Ժանսեմը, Չիկ Տամատյանը, Ասատուր Պզտիկյանը և ուրիշներ: Այս բնագավառում են ստեղծագործում Հրաչյա Ասլանյանը, Ռուբեն Արուտչյանը, Գաստելլո Գասպարյանը, Գայանե Գյուլամիրյանը, Վլադիմիր Սողոմոնյանը և ուրիշներ:

Դեկորատիվ -կիրառական արվեստ

Դեկորատիվ արվեստը միջավայրի, տոնակատարությունների, հանդիսությունների, ցուցադրությունների և այլ միջոցառումների գեղարվեստական ձևավորման, ինչպես նաև գեղարվեստական կենցաղային իրերի պատրաստման արվեստն է: Դեկորատիվ-կիրառական արվեստը դեկորատիվ արվեստի և ժողովրդական ստեղծագործության նյութական ու հոգևոր արժեքներ ստեղծող ոլորտ է: Դեկորատիվ արվեստն սկզբնավորվել է հասարակության զարգացման վաղ շրջանում: Դարերի ընթացքում այն կրել է տարբեր ոճերի և ուղղությունների ազդեցությունը: Մ. թ. ա. II հազարամյակում Չինաստանում ստեղծվել են բրոնզե գեղարվեստական կերտվածքներ, ոսկրե և նեֆրիտե քանդակազարդ առարկաներ, մ. թ. ա. V-III դարերում՝ բարձրորակ մետաքսե գործվածքներ, խեցեղեն, մ. թ. VIII–X դարերում ծաղկման է հասել ճենապակու, իսկ XIV–XVIII դարերում՝ խեցեգործական արտադրությունը: Միջնադարյան Եգիպտոսի դեկորատիվ-կիրառական արվեստում տարածված էին դաջածո գործվածքները, նկարազարդ խեցեգործությունը, ընդելուզված կահույքի պատրաստումը, փայտափորագրությունը և այլն: Դեկորատիվ արվեստի գանձարանում իրենց ծանրակշիռ ավանդն ունեն նաև հայ վարպետները: Կարի, ոսկերչության, դրվագման, խեցեգործության և արհեստների այլ տեսակներ Հայաստանում հայտնի էին մ.թ.ա. III հազարամյակից: Հայկական ոսկերչությունն ու ակնագործությունը զարգացել են ոչ միայն Դվինում, Անիում, Արծնում, Վասպուրականում, Արցախում, Ախալցխայում, այլև Կոստանդնուպոլսում, Լվովում, Թիֆլիսում, Նոր Ջուղայում, Նուխիում, Շամախիում և այլուր: Վաղ միջնադարից մինչև XIX դարը պատրաստվել են թանկարժեք մետաղներով, քարերով զարդարված, դրվագված, ընդելուզված գրքերի նրբագեղ կազմեր ու մասնատուփեր: Միջազգային շուկայում մեծ պահանջարկ ունեին փորագրված ոսկրե իրերը, կարմիր կաշվե առարկաները, փայտե քանդակազարդ կերտվածքները: IX–XIII դարերում Հայաստանում զարգացման բարձր մակարդակի են հասել կարը, կտորեղենի ձևավորումը, արտահանվել են բրդե, մետաքսե ինքնատիպ գործվածքներ: Ֆրանսիայում չթի մեծ պահանջարկի ժամանակ հայերը 1677 թ-ին

Մարսելում ստեղծել են դաջածո կտորների ֆաբրիկա, որն առաջինն էր Եվրոպայում, իսկ 1699 թ-ին անգլիացիները դաջածո գործվածքներ են պատվիրել Սպահանի հայ վարպետներին: XVII– XVIII դարերում լեհ ազնվականության զգեստի պարտադիր տարր էր «Սլուցկի գոտին», որը պատրաստում էին Սլուցկի հայերը և արտահանում եվրոպական երկրներ: ՀՀ-ում դեկորատիվ-կիրառական արվեստը շարունակում է նորովի զարգանալ ազգային ավանդույթների հենքի վրա: Այդ ոլորտի հայ վարպետներն զբաղվում են ապակու տարատեսակների (հախճապակի, ճենապակի) գեղարվեստական մշակմամբ, արծաթագործությամբ, ոսկերչությամբ, մետաղագործությամբ, փայտագործությամբ, խեցեգործությամբ և այլն:

Քանդակագործություն

Քանդակագործությունը կերպարվեստի ամենահին տեսակներից է, որի գործերն ունեն ծավալատարածական ձևեր, եռաչափ են և շոշափելի: Քանդակագործությունը պատկերում է հիմնականում մարդուն, կենդանիներ (անիմալիստական ժանր), սակավ՝ բնությունը (բնապատկեր) և առարկաներ (նատյուրմորտ): Քանդակը, սովորաբար, նախ կերտում են կավից, պլաստիլինից կամ մոմից, ապա ձուլում գիպսից. գիպսե ձուլածոները ծառայում են նաև որպես մոդել՝ քանդակն ավելի մնայուն նյութերով (փայտ, քար, մետաղ) վերստեղծելու համար: Քանդակն ունի 2 ենթատեսակ՝ բոլորաքանդակ (ստեղծագործությունը բոլոր կողմերից տեսանելի է) և ռելիեֆ (պատկերը հարթության վրա փորագրվում է կամ կերտվում որոշակի ցցունությամբ): Ռելիեֆները, ըստ ծավալային պատկերաձևերի, լինում են բարձրաքանդակ (քանդակապատկերի ծավալի կեսից ավելին դուրս է մակերեսից), հարթաքանդակ (քանդակապատկերի ծավալի կեսից պակասը դուրս է մակերեսից) և խորաքանդակ (մակերեսից խոր ընկած քանդակապատկեր), որոնք հարդարում են շենքի ճակատը, գոտին, ճակտոնը, ներսի պատերն ու առաստաղը (առաստաղապատկեր): Քանդակագործության մեջ տարբերակում են մոնումենտալ, հաստոցային, դեկորատիվ և փոքր ձևերի քանդակներ: Մոնումենտալ քանդակի նպատակը կարևոր գաղափարների, պատմական իրադարձությունների, ականավոր մարդկանց դերի քարոզումն է և հիշատակի հավերժացումը. դրվում է բաց տարածության մեջ և հասարակական վայրերում: Հաստոցային քանդակը բնական կամ ճարտարապետական միջավայրից կախում չունի. դրվում է թանգարաններում, հասարակական կամ բնակելի շենքերի ներսում: Մեծ հնարավորություններ ունի թե՛ բոլորաքանդակում, թե՛ ռելիեֆում մարմնավորելու թեմատիկ զանազան իրավիճակներ և արտահայտելու կերպարի ներաշխարհի առանձնահատկությունները: Դեկորատիվ քանդակը զարդարման միջոց է և սովորաբար համադրվում է ճարտարապետության հետ: Փոքր ձևերի քանդակները տարբեր ժանրերի մանրաքանդակներ են («մանր պլաստիկա»), որոնք պատրաստվում են խեցուց, մետաղից, ոսկրից, քարից, ապակուց կամ պլաստմասսայից. նախատեսված են շինությունների ներսը զարդարելու համար, հաճախ աղերսվում են դեկորատիվ-կիրառական

արվեստի հետ: Քանդակագործության առաջին նմուշները (ժայռապատկերներ, կնոջ մարմնով բոլորաքանդակներ և այլն) ստեղծվել են վաղ անցյալում: Դեռևս բրոնզի դարում քանդակագործությունը համարվել է մասնագիտություն, որի հնագույն կենտրոններն էին Հին Եգիպտոսն ու Միջագետքը: Քանդակագործության պատմության կարևոր փուլն անտիկ շրջանն է, որի իդեալը ներդաշնակ զարգացած մարդու կերպարի ստեղծումն էր (Միրոն, Ֆիդիաս, Պոլիկլետոս, Սկոպաս և ուրիշներ): XV–XIX դարերում քանդակագործության մեջ գերիշխել են կառուցվածքային ավելի ազատ լուծումները (Դոնատելլո, Միքելանջելո, Օգյուստ Ռոդեն, Ֆեդոտ Շուբին և ուրիշներ): XX դարում թարմացվել և նորոգվել են քանդակագործության մեթոդներն ու նյութերը (Արիստիդ Մայոլ, Էմիլ Անտուան Բուրդել, Հենրի Մուր և ուրիշներ): Քանդակագործության ամենահին ձևերից են կիսանդրին, անդրին (ամբողջական արձանը), դիմաքանդակը և այլն: Տարբերում են նաև թեմատիկ քանդակներ, որոնք պատկերում են մեկ կամ մի քանի ֆիգուր (Միքելանջելոյի «Պիետտա», 1498–1501, Օ. Ռոդենի «Կալե քաղաքի բնակիչները», 1880 թ., Ա. Մայոլի «Երեք գեղուհիներ», 1930–38 թթ., և այլն): Տարբեր նյութեր օգտագործելիս կիրառվում են քանդակելու տարբեր տեխնիկաներ՝ ծեփում, կոփում, կռում, փորագրում, դրվագում և այլն: Կերտվում են նաև խեցեղեն քանդակներ: Հայաստանում քարի մշակման մասին վկայված է հնագույն ժամանակներից. առաջին քանդակները ժայռապատկերներն են: Բրոնզի դարից հայտնի են բոլորաքանդակը և բարձրաքանդակը ոչ միայն քարից (վիշապներ), այլև կավից, փայտից, գունավոր մետաղներից (պեղվել են Վանաձորում, Լճաշենում): Մոնումենտալ արձաններ, հարթաքանդակներ, քանդակազարդ իրեր են ստեղծվել երկաթի դարի ուրարտական արվեստում, որի ավանդույթները շարունակվել են մ. թ. ա. VI–IV դարերում: Հելլենիզմի շրջանում քանդակագործությունը զարգացել է մեծ մասամբ Հունաստանից բերված բարձրարվեստ կոթողների օրինակով և տեղում ստեղծված արձաններով (Նեմրութ լեռան վրա Երվանդունիների տեղադրած մոնումենտալ քանդակները, մ. թ. ա. I դար): Պատմական և գեղարվեստական մեծ արժեք ունեն այդ շրջանի արծաթագործության նմուշները, դրամները՝ Տիգրան Բ Մեծի և Արտավազդ Բ-ի դիմաքանդակներով, Գառնիի տաճարի զարդաքանդակները: Դեկորատիվ զարդաքանդակները կիրառվել են հիմնականում եկեղեցաշինության մեջ, որոշ հուշարձաններում համադրվել են թեմատիկ բարձրաքանդակների հետ. վաղ շրջանի նմուշներն ի հայտ են եկել V դարում (Տեկոր, Դվին, Երերույք և այլն): Այդ համադրումը փայլուն կերպով դրսևորվել է նաև VII դարում՝ Զվարթնոցի, Մրենի, X–XIV դարերում՝ Անիի հուշարձաններում, Աղթամարում, Գանձասարում, Նորավանքում և այլուր: Ճարտարապետության մեջ հաճախ քանդակազարդել են փայտը՝ դռների, խոյակների համար: Ստեղծել են նաև փայտե թեմատիկ քանդակներ: Եկեղեցական կառույցներում տարածված էին նվիրատուների պատկերաքանդակները (Աղթամար, Գագկաշեն, Սանահին, Հաղպատ և այլն), միջնադարյան Հայաստանում՝ հուշակոթողները, որոնք դրվում էին հանգուցյալների շիրիմներին կամ նվիրվում որևէ կարևոր իրադարձության: IX դարից տարածվել է խաչքարի արվեստը, զարգացել է նաև մետաղի գեղարվեստական

մշակումը: Նոր ժամանակներում հայկական պրոֆեսիոնալ քանդակագործությունը ձևավորվել է XIX դարի վերջին, Կոստանդնուպոլսում (Երվանդ Ոսկան): Հաջորդ սերնդի ներկայացուցիչներից են Անդրեաս Տեր-Մարուքյանը, Միքայել Միքայելյանը, Հայկ Բադիկյանը, Հակոբ Փափազյանը, Ռուզան Մուրացանը, Միքայել Փոլադյանը և ուրիշներ: 1920-ական թվականներին Հայաստանում ստեղծվել են բազմաթիվ մոնումենտալ քանդակներ, ձևավորվել է հայ քանդակագործության ազգային դպրոցը և զարգացել Արա Սարգսյանի, Սուրեն Ստեփանյանի, Ստեփան Թարյանի, Այծեմնիկ Ուրարտուի, ապա՝ Երվանդ Քոչարի ջանքերով: Հայրենական մեծ պատերազմի (1941– 1945 թթ.) և հետպատերազմյան տարիներին իրենց լավագույն գործերով աչքի են ընկել Նիկողոս Նիկողոսյանը, Սարգիս Բաղդասարյանը, ապա՝ Արա Հարությունյանը, Ղուկաս Չուբարյանը, Խաչատուր Իսկանդարյանը, Թերեզա Միրզոյանը, Հովհաննես Բեջանյանը, Ֆրիդ Սողոյանը և ուրիշներ: Խեցեգործական քանդակներ են ստեղծել Ռազմիկ Շահվերդյանը, Հռիփսիմե Սիմոնյանը, Հմայակ Բդեյանը: 1970-ական թվականներից ուշագրավ քանդակներ են կերտել Լևոն Թոքմաջյանը, Բենիկ Պետրոսյանը, Արա Շիրազը, Վլադիմիր Պետրոսյանը, Արտաշես Հովսեփյանը, Ֆերդինանդ Առաքելյանը, Գետիկ Բաղդասարյանը, Տիգրան Արզումանյանը և ուրիշներ: Հայկական քանդակագործության առաջընթացը պայմանավորել են նաև Սփյուռքի վարպետները՝ Հակոբ Գյուրջյանը, Խորեն Տեր-Հարությանը, Ռուբեն Նակյանը, Արտո Չաքմաքչյանը, Նվարդ Զարյանը, ապա՝ Դավիթ Երևանցին, Էմիլ Գազազը, Վան Սողոմոնյանը և ուրիշներ:

Կերպարվեստի ժանրերն են՝ բնանկարը, դիմանկարը, նատյուրմորտը (անկենդան բնություն), կրոնական ժանր, կենցաղային ժանր, պատմական ժանր, դիցաբանական, պատերազմական ժանրը: Բնանկար՝ տեսարան կամ որևէ տեղանքի պատկեր է, գլխավորապես գեղանկարչության և գրաֆիկայի մեջ, ինչպես նաև գեղարվեստական ստեղծագործություն, որի պատկերման առարկան բնությունն է: Շատ անգամ որպես ֆոն է ծառայում հարթաքանդակում, գեղանկարում և գրաֆիկայում: Բնանկարը բնության ձևերի և երևույթների, լույսի, օդի, տարածության գեղարվեստական արտացոլումն է՝ պայմանավորված հեղինակի աշխարհայացքով, մտքերով և զգացմունքով: Դիմանկարը գեղանկարում, գրաֆիկայում և լուսանկարչությյան մէջ կոնկրետ մարդու կամ մի խումբ մարդկանց պատկերն է: Նատյուրմորտ(մեռած բնություն), հիմնականում հաստոցային գեղանկարում, որտեղ պատկերվում է անշարժ, անշունչ առարկաներ՝ սովորաբար տնային կահկարասի, մրգեր, ծաղիկներ, ձկներ, խփված վայրի թռչուններ, որևէ մասնագիտության պիտույքներ:

Այսպիսով տալով աշակերտին նմանօրինակ ինֆորմացիա խթանում են սովորողների ճանաչողական ակտիվությունը, մտածողության ինքնուրույնությունը, սեփական գիտելիքներն ինքնուրույն լրացնելու և հարստացնելու կարողություններ: Սովորեցնեում ենք տեղեկատվության աղբյուրներից օգտվելու, ժամանակակից տեղեկատվական հեղեղի մեջ կողմնորոշվոլու, անհրաժեշտ տեղեկությունը ճիշտ ընտրելու, մշակելու, վերաձևակերպելու, այսինքն՝ գիտելիք կառուցելու կարողություններ: Ձևավորում ենք պատմական

դեպքերը,երևույթները համեմատելու, վերլուծելու, գնահատելու, վերացարկելու, ընդհանրացնելու և կանխատեսումներ կատարելու կարողություններ.

Զարգացնում եմք ուսումնառության արդյունքում սովորողների ստացած գիտելիքները և տեսական դրույթները պատմական կենդանի նյութի վրա կոնկրետացնելու անցյալի, ներկայի հասարակական-քաղաքական երևույթների վերլուծության ժամանակ կիրառելու կարողություններ ու հմտություններ:Զարգացնում ենք սովորողների զգայական ընկալման, մտավոր և հուզական ճանաչողության բոլոր տեսակներն ու կամային որակները (լսողություն, տեսողություն, կամք, համառություն) և մտավոր գործողությունները (համեմատում, համադրում և այլ):

Եզրակացություն

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրակացնել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում: Այս հետազոտական աշխատանքը շոշափում է մի այնպիսի թեմա, որը անկասկած շատ մեծ նշանակություն ունի Հայաստանի և հայ ժողովրդի համար: Խոսքը գնում է ազգային արժեքային համակարգի ձևավորման մասին: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները: Մշակութային և հոգևոր արժեքները գնահատելը, <<հայրենասիրությունը, վստահությունը, անկեղծությունը, կյանքը, սերը, հարգանքը, կամքը, հետաքրքրությունը, հավատարմությունը, կրթվելը, խելքը, բարությունը, միմյանց գնահատելը, հավատը առ Աստված, արժանապատվությունը, ճշտախոսությունը, կամեցողությունը, խոհեմությունը, կոլեկտիվիզմը առատաձեռնությունը, նվիրվածությունը,աշխատասիրությունը, մշակութային արժեքները գնահատելը, ազատությունը, ընկերությունը, ինքնուրույնությունը, մարդ լինելը>>: Մենք պետք է ճիշտ ուղղորդենք աշակերտներին, առավել ևս ներկայիս տեղեկատվական բազմանյութ իրականության մեջ, որպեսզի իրենց ուրույն դիմագիծը ճիշտ ձևավորեն արժեքային համակարգի կոնտեքստում և երբեք չկորցնեն այն: Կյանքի տարբեր ոլորտների նկատմամբ վերաբերմունքը սովորողների մեջ ձևավորվում է կրթության ընթացքում ստացած տեղեկույթի միջոցով: Կրթության սոցիալական ինստիտուտի միջոցով իրականանում է արժեքային մշակույթի փոխանցումը սերնդեսերունդ:

Գրականություն

- Շիշմանյան Ռ. , Բնանկարն ու հայ նկարիչները, Ե. , 1958:
- Ազարյան Լ. Ռ. , Կիլիկյան մանրանկարչությունը XII-XIII դդ. , Ե. , 1964:
- Հայկական մանրանկարչություն, Ե. , 1967: Ավետիսյան Ա. Ն. , Հայկական մանրանկարչություն
- Մարտիկյան Ե. , Հայկական կերպարվեստի պատմություն, գիրք 1-2, Ե. , 1971–75:
- Ղազարյան Մ. , Հայ կերպարվեստը XVII - XVIII դարերում, գեղանկարչություն Ե. , 1974:
- Дурново Л. А. , Краткая история древнеармянской живописи, Е. , 1957;
- Каменский А. А. , Зрителю о живописи, М. , 1959;
- Измайлова Т. А. , Айвазян М. А. , Искусство Армении, М. , 1962;
- Недошивин Г. А. , Беседы о живописи, 2 изд. , перераб. , М. , 1964;
- Всеобщая история искусств, т. 1–6, М. , 1956–66;
- История русского искусства, т. 1-13, М. , 1953-69.
- Մանասյան Ն., Հանրակրթության արժեքային համակարգը, «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր:
- Համացանց…